

տարի) եւ Լոս Անճելըսի «Վերելք» պարբերաթերթը (70 թիւ): Այդ հատորներու ընդանդակութեան կէսէն աւելին Հ. Յեր-հաթեանի յօդուածները կը գրուեն:


Ասկէ զատ առանձին հատորով հրատարակուած են՝

- 1) Փոքրիկն Գոհորոն, սուրբ տղու մը կեանքը, Պլովտիւ 1933:
- 2) Դժոխքի Ուխտատըրը, (Հ. Դամիանոս, Բորտոներու առաքեալը), Պէյրուս 1948:
- 3) Երկնքի ասպետը (Տոն Պոսթօ, լքուած պատանիներու առաքեալ եւ Սալիզեան միաբանութեան հիմնադիր), Պէյրուս, 1949:
- 4) Միսիթար Մեծ Սեբաստացին, Պէյրուս, 1949: Նոյնը կրկին աշխատուած՝ Միսիթար՝ Մարդը, Հայը, Սուրբը, Վիեննա, 1976:
- 5) Կարդիալ Աղաճաճեան, Կաթողիկոս-Պատրիարք, Պէյրուս:
- 6) Ո՛չ, Մարիա Կորեթթի, Պէյրուս, 1951:
- 7) Սրտի ճիչ մը (Ի հանգիստ Հովսէփ Ամպարեանի), Պէյրուս, 1952:
- 8) Գարնան պէս սիրուն (պատմուածքներ), Պէյրուս, 1953:

- 9) Սրտերը վեր (պատմուածքներ), Պէյրուս, 1954:
- 10) Քրիստոնէական վարդապետութիւն (Կրօնի դասագիրք), Վիեննա, 1954:
- 11) Կեանք մը՝ մոլորուած Աստուծոյ եւ Ազգին (Գերապ. Հ. Մեսրոպ արքեպ. Հապոզեանի յօդուածներն առիթով), Վիեննա, 1961:
- 12) Գերապայծառը (Դամբանական Գերապ. Հ. Սահակ Եպս. Կոզեանի մահուան առիթով), Պէյրուս, 1963:
- 13) Մանուկին Քրիստոնէականը, Պէյրուս, 1968:
- 14) Իմ Ս. Գիրքս, Պէյրուս, 1968:
- 15) Կանանչ է այս ճամբան («Քրիստոսի երիտասարտութիւնը» գերմաներէն գրքէն ազատ թարգմանութիւն), Պէյրուս, 1970:
- 16) Թոնք Դեպի Յաիտեճականը, Պէյրուս, 1983: Մխիթար Մատեն., թիւ 4:
- 17) Կեանքը Երկուքով, Լոս Անճելըս, 1983:
- 18) Մէկը միւսէն գեղեցիկ (պատմուածքներ), Լոս Անճելըս 1983:

Հ. Պօղոս Գոճանեան

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎՐԴ. ՊՈՀՃԱԼԵԱՆ



Երկու ամսուան ընթացքին Վիեննական Մխիթարեան միաբանութիւնը սգաց իր երկրորդ կորուստը:

Բարսեղ վրդ. Յերհաթեանէ յետոյ Արիստակէս Վրդ. Պոհճալեան, նոյնպէս անբասիր, անձնագոհ Հոգեւորական, երկար տարիներու կրթական մշակ, տաղանդաւոր արուեստագէտ, գիտնական, գրող ու դաստիարակ, 14 Փետրուար 2000 Պոլիս, Ս. Յակոբ հիւանդանոցի մէջ, կարճատեւ, բայց տառապալից հիւանդութենէ վերջ անվերադարձ բաժնուեցաւ մեզմէ:

Մկրտութեան անունով՝ Պերճ, ծնած էր Պոլիս-Իւսկիւտար, 28 Յունուար 1917: Նախնիները գաղթած են Կեսարիայէն: Ազգային Ս. Փրկիչ հիւանդանոցի բարերար՝ Աւագ Սարկաւազ Կարապետ էֆենտի եւ պուլկարահայ Եղիսաբեթ ալքուիլի եօթ զաւակներուն անդրանիկն էր ան: Նախակրթարանը սկսած է Իւսկիւտարի Պերպերեան վարժարանը, յետոյ ուսումը շարունակած՝ Ս. Խաչ ճեմարան եւ Մխի-

թարեան վարժարաններու մէջ: 1933-ին կ'երթայ Վիեննա իբր Մխիթարեան դպրեվանքի աշակերտ, ուր դպրոցական ընթացքը ամբողջացնելէն վերջ՝ իմաստասիրական-աստուածաբանական իր ուսումը կը կատարէ Վիեննայի պետական համալսարանի մէջ, որմէ յետոյ կը վկայուի նաեւ քաղաքին մանկավարժական հաստատութենէն: 8 Մարտ 1936-ին, կրօնաւորական երեք ուխտերով կ'անդամակցի Մխիթարեան միաբանութեան եւ 11 Փետրուար 1940-ին կը ստանայ քահանայական Ս. Օծումը:

Իր հանրային գործունէութիւնը կը սկսի 1942-ին Պոլիս՝ Մխիթարեան վարժարանին մէջ: Բայց 1944-ին կը ստիպուի թրքական օրէնքով երեք տարի զինուորական ծառայութիւն կատարել:

1949-1951 կարճ ժամանակի համար կը պաշտօնավարէ Գահիրէի եւ Պէյրուսի Մխիթարեան վարժարաններուն մէջ: 1951-ին կը վերադառնայ Պոլիս, ուր երկար տարիներով կը գործէ՝ իբր ուսուցիչ Մխիթարեան վարժարանի մէջ, եւ, 1988-էն սկսած, իբրեւ վանատան մեծաւոր մինչեւ իր մահը:

Հ. Պոհճալեան ունէր բազմատաղանդ արուեստագէտի նուրբ, զգայուն հոգի: Նաեւ շատ ընկերական էր եւ զուարթաբան: Ան իր երաժշտական տաղանդը յայտնեց 9 տարեկանին տուած իր առանձին համերգով: Դժբախտաբար հետագային չզարգացուց այդ կարողութիւնը: Պատճառը ծուլութիւնը չէր, այլ իր ծայրաստիճան համեստութիւնը: Հակառակ որ դասական երաժշտութեան եւ ամերիկեան հին ճազի սիրահար մըն էր, Պոհճալեան զբաղեցաւ միայն եկեղեցական երաժշտութեամբ եւ այդ մարզին մէջ ալ մնաց

շատ համեստ: Երաժշտական լաւ քննադատ էր:

Հ. Պոհճալեան ունէր գրական հանելուկի ոճ: Իր գրութիւնները կ'ընդգրկեն բազմազան մարզեր՝ լեզուական, պատմական, երաժշտական, թատերական, նկարչական եւ կրօնաբարոյական:

Բացի իր առանձին հրատարակութիւններէն, որոնց ցանկը ստորեւ կը ներկայացնենք, իր բազմաթիւ յօդուածները լոյս տեսած են «Մարմարա» լրագրին մէջ: Զինք կը կոչէին «բազմակողմանի հանրագիտարան»:

Հ. Պոհճալեանի երկերէն առանձին հատորով լոյս տեսած են՝

1) Հայերէն-հայերէն, բացատրական առձեռն բառարան, Իսթանպուլ, 1974, Բ. տպ. 1991:

2) Թրքերէն-հայերէն, առձեռն բառարան, Իսթանպուլ, 1981:

3) Ակնարկ մը հայ գիտնականներու վրայ, Վիեննա, 1989:

4) Մանկութիւն չունեցող մարդիկ, Իսթանպուլ, 1995:

5) Լոյսին երգը, Մխիթար. մատենաշար 3, Պէյրուս, 1980:

6) Այգաբացի, Մխիթ. Մատ. 16, Պէյրուս, 1986:

7) Երիտասարդը կեանքի դիմաց, Մխիթ. մատ. 28, Պէյրուս, 1991:

8) Բրիտանացի Աշխարհայեացք եւ նոր սերունդ, Մխիթ. մատ. 28, Պէյրուս, 1991:

9) Իմ Պատարագի Գիրքս, թրգմ., Իսթանպուլ, 1995:

10) Սրտի խորքերէն, Իսթանպուլ, 1997:

11) Հոգւոյ թրթուացումներ, Իսթանպուլ, 1997:

12) Հոգեւոր Արձագանգ, 26 կրօնաբարոյական պրակներ, 1998-1999:

Անտիպ գործերէն յիշենք՝

1) Համայնապատկեր վիեճակական միութեան հայրերու կրթական գործունէութեան Իսթանպուլի մէջ:

2) Եգիպտոսի եւ բուրգերու պատմութիւնը:

3) Ակնարկ մը հայ գիտնականներու վրայ, յանդիման:

4) Թրքահայոց թատրոնն ու բեմը:

5) Հրաբուխներու պատմութիւնը:

6) Հայերէն-գերմաներէն բառարան:

7) Հայերէն-թրքերէն բառարան:

Հ. Յակոբոս Զոփուրեան